նի Հանրապետութեան սահմանները ո՛չ միայն յետ բերաւ ու Ախուրեանի եզերքը հասցրեց, որպէսզի հայկական հողերի հաշուին Տաճկաստանի բարեկամութիւնը չահի, այլ եւ Անդրկովկասի ներսը նա Ղարաբաղն ու Նախիջեւանը Ադրբէջանին, Ախալքալաքն էլ Վրաստանին տուաւ:

Դարձեալ նոյն հիմնական պատճառով. որովհետեւ՝ նա բոլոր պարագաներում մեր անվերապահ ռուսասիրութեանը վստահ է, բայց ո՛չ երբեք՝ Վրաստանի եւ Ադրբէջանի: Այս է արդէն աշխարհի կանոնը: Ինչպէս անհատները, այնպէս եւ պետութիւնները հաշուի են առնում ո՛չ այնչափ օգնական, բարեկամ ուժերը, մանաւանդ երբ սրանք միշտ ու հանապազ պատրաստակամ են ու պատուի կեցած նրա առջեւ, այլ՝ թշնամաբար տրամադրուած, ազդակները, որոնց չահե՛լ պէտք է. աւելի լաւ, եթէ դա կատարել կարելի է երրորդ կողմի հաշուին. մէկը, որ կամովին ու սիրով է յանձն առել տիրապէտ ծառայի դերը:

Մի՞թէ այս ամէնը հերիք չէ, գոհացուցիչ պատճառ չէ վերջապէս, որ հայութիւնը խսկապէս որ մի օր վերադնահատութեան ենթարկէ ինչպէս իր «ռուսական», այնպէս նաեւ «հակաթուրք» օրիենտացիաների խնդիրը: Ելակէտ ունենալով ո՛չ թէ նախ եւ առաջ ռուսական տեսակէտը, ինչպէս որ վարուել ենք մինչեւ օրս անդիտակցաբար, ոչ էլ «մեր թշնամուն չարիք հասցնելը մեզ բարիք հասցնել նշանակում է» սին դատողութիւնը մեզ ղեկավար դարձնելով, այլ միայն եւ միայն՝ հայ ժողովուրդի եւ Հայաստանի շահերը: Ուրիշ ոչինչ: Շարունակ երկիւղ ներշնչելով մեզ, թէ՝ տեսէ՛ք, Ախուրեանի աջ եզերքին Թուրքն է կանգնած, միշտ էլ կարմիր լաթի տեղ ծառայեցնելով տաճկական վտանգը մեր աչքին՝ հայի բերանը բամպակ են թխմում եւ լռեցնել տալիս մեզ, հարուածներ տեղում ո՛չ միայն մեր երեսին, այլ եւ մեր կռնակին (տե՛ս Անդրկովկասի այսօրուան քարտէսը): Օրն ի բուն մեր ականջին փսփսում են, երբեմն նաեւ բարձրաձայն ասում, թէ հայը եւ Հայաստանը չեն կարող լքել «ռուսական օրիենտացիան», որովհետեւ դա պիտի նշանակէր, որպէս թէ, որդեգրումն «տաճկական օրիենտացիայի»: Բայց այդպէս դատողները կուրանում են, չեն տեսնում իրականութիւնը, եւ կամ կոյր են ձեւանում: Նրանք չեն տեսնում ո՛չ մեր, ո՛չ էլ ռուսական այսօրուան իրականութիւնը — հիմքից փոխուած: Հայութեանը «ինքնին հասկանալի հակաթուրք եւ ռուսասէր օրիենտացիա» քարոզողները մոռանում են, որ այսօր Ռուսաստանը ի՛նքն է որդեգրել «տաճկական օրիենտացիա»: Ի՞նչ է, մե՞նք պիտի շարունակենք մեր փխրուն ոտքերով կեցած մնալ ռուսի երբեմն կոխոտած եւ այժմ լքած հետքերի վրայ: Եւ ի՞նչ օգուտ դրանից: Զօրաւոր ռուսը թողել է իր նախկին դիրքերը, պինդ է բռնել Թուրքի փէշից, նա մէկդի է հրում, աքացի տալիս մեզ, իսկ մենք շարունակ կանչո՞ւմ ենք երեխայի նման. «մամ՞ն, ռո՛ւս ջան, քո հոգուդ դուրբան, քո փէշը բաց չեմ թողնի, թէկուզ սպաննես ինձ»:

Բոլշեւիկները ցոյց են տալիս, որպէս թէ հէնց իրենց ուղածն էլ այն է, որ հայը վերջապէս թողնի, հակաթուրք դիծը: Բայց նա այդ անում է կեղծելով, ստում է այդպէս խօսելով բարձրաձայն: Ռուս բոլշեւիկը կեղծում է իրապէս, իսկ նրա հայ հետեւորդն էլ իր ազգին յատուկ միամտութեամբ հալած իւղի տեղ է դնում ռուս իշխանաւորի բարձրախօս արտայայտութիւնները: Եւ սակայն, ո՛չ հին ռուսն է կամեցել, ո՛չ էլ նորն է ուզում, որ հայը երբեւէ հաշտուի Թուրքի հետ: Հայրբրբական թշնամութիւնը ամէն գոյնի Ռուսաստանների համար ցանկալի խաղաքարտ է. միայն թէ՝ խաղալու, երբ իրեն ձեռնտու է այդ: Կարծո՞ւմ էք անհնար բան է, որ օրին մէկն էլ՝ կարմիր Ռուսաստանը «Հայաստանի շահը» իրեն գրօշ ու դիմակ դարձրած, բախում ունենայ Տաճկաստանի հետ: Մի բախում, որի ընթացքին նա ի հարկին հեշտութեամբ, 24 ժամում իսկ, պարպել կարող է ամբողջ Հայաստանը ու Փոքր Կովկասի կատարներին ամուր դիրքեր գրաւել, մեր մնացած ժողովուրդն էլ՝ թշնամի Տաճկաստանի երախը նետել: Եւ կամ չէ՞ կարող կրկին մի օր դալ, երբ ներքին Ռուսիայում յեղափոխութիւն ծագի կամ խռովութիւններ տեղի ունենան, վերստին բարոյալքուած ռուս զինուորն էլ զէնքը վար նետելով — Թուրքի ու վրացո՛ւ